


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հմր 8 Մէճ.  
Վաւառաց 10 Մէճ.  
Վեդաւառաց 4 Մէճ.  
Վաւառաց 5 Մէճ.  
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.  
Յետեւեւան տողը մէկ անգամի հաւ.  
Տար 3 զուրուշ, երկու անգամի հաւ.  
Տար 2 զուրուշ, երկու անգամի հաւ.  
Համար գաւա սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 27 հոկտ.  
Պաշտօնական ծանուցում մը Վերմա-  
նիդ հետ մեր յարաբերութեանց վերա-  
բերեալ երկու դալի պայմանները սուտ կը  
հանէ:

Մատրիս 28 հոկտ.  
Սպանիոյ լրագրաց լեզուն այնչափ  
թշուաճական չէ՝ Վաղղիոյ նկատմամբ:  
Թորէթէ ծովապետը ծանր հիւանդ է:  
Բէշթա 28 հոկտ.  
Հունդարիոյ կառավարութիւնը բո-  
ւոր տուրքերն հարկերն 5 աւելցնելու  
առաջարկութիւն պիտի ներկայացնէ աղ-  
քային ժողովին:

Լոնտոն 28 հոկտ.  
Այսօր Թամիզի նստարանէն Օսման-  
եան դրահատը մը ջուրն իջաւ:  
Այս դիւեր 25 թիւերի մօտ Օվլը դիւ-  
ղը բաժնակի մասնաւոր մ'այրեցաւ և ինն  
հոգի մեռան այս հիւղէին մէջ:

Լոնտոն 27 հոկտ.  
Պէզլէն մարտիկան հոս եկաւ:  
Փարիզ 27 հոկտ.

Լրագրաց հարցորդուած աղք մը կը  
հաւատայ թէ՝ Վաղղիոյ յարաբերութիւն-  
թիւններն ամեն տէրութեանց հետ խիստ  
լաւ վիճակի մէջ են. և կաւելցնէ թէ ըն-  
պանիոյ կառավարութեան ծանուցադրելու  
հասարակաց կարծեաց ցոյց տուած եր-  
կիւղը չարագործներ:

Եթէ թմամայ իշխանութեան կուսակից  
թերթերը՝ Ժէրմո Պոնաբարթի իշխանին  
յեղափոխական շարժառարարութիւնը հեր-  
քելով՝ կամքաստանեն դայն թէ հանրա-  
պետութեան նախագահութիւն ձեռք  
բերելու յոռով Պոնաբարթի եան կուսակի-  
ցութիւնը խորտակեց ու պառակտեց:

Պէրլին 28 հոկտ.  
Արմիս կոմիսն հիւանդութիւնը ծան-  
րանալով՝ ազատութիւն տրուեցաւ իրեն՝  
երաշխարհութիւն առնուելով, և անմի-  
ջապէս Նիս պիտի երթայ: Իւր գաւառա-  
տանին քննութիւնն աւարտած է:

Հաւոմ 27 հոկտ.  
Գերմանիոյ կիլեոմ կայսրը՝ Պապին  
մէկ նամակին պատասխան գրելով՝ կրօ-  
նական խնդրոյն մէջ Գերմանիոյ հաստա-  
տած օրէնքներն ու ձեռք սուած միջոց-  
ները կարգարացնէ:

Գամակուս 28 հոկտ.  
Սիրիոյ կուսակալ Էսատ փաշան ամ-  
սոյս 24ին յանկարծ Հօրան դնաց և Լէ-  
ճայի Պէտէվիներն հնազանդեցոց՝ երաշ-  
խարհութիւններ առնելով, Գետոյ իւր  
խորհրդոց կատարումը լրացնելու համար  
Սաֆա-Համուրան գնաց:

Պէրլին 29 հոկտ.  
Արմիս կոմիսն առժամանակեայ ա-  
զատութեան համար պահանջուած երոշ-  
խարհութեան գումարն է 100000 թա-  
ւեր: Կոմիսն բոլոր ազգականներն՝ որք  
քաղաքային և զինուորական պաշտօններ  
կը վարէին, հրաժարական տուին:

Երեսփոխանական ժողովոյ բացման  
առթիւ կարդացուած արքունական ճա-

ռը վարչական նոր օրէնսդրութեանց վը-  
րայ կը խօսի և կաւելցնէ թէ երկիրն ա-  
մեն տէրութեանց հետ բարեկամական  
յարաբերութեան մէջ է, և թէ խաղա-  
ղութեան հաստատ մնալուն վրայ կա-  
կած մը չկայ առայժմ:

Այս առեւտրականութիւնը ջերմ ծա-  
փահարութեամբ ընդունուեցաւ:

Բէշթա 29 հոկտ.  
Ելումտից նախարարին ներկայացու-  
ցած հաշուեցոյցը՝ ծախուց վրայ եղած  
խնայութեանց հաշուակ 2741/2 միլիոն  
ֆիօրին բաց ցոյց կուտայ: այս բացը գո-  
ցելու համար հին տուրքերն հարկերն 5  
աւելցնել կառաջարկէ:

Լոնտոն 29 հոկտ.  
Օսմ. Գոն. 43 3/4  
Փոխ 4865  
» 4869 54 3/4  
» 4871 —  
» 4872 84 1/2  
» 4873 53 1/8

Նոր փոխառութիւն 2 3/4 46  
Անդր Գոն. 93  
Իլիէրբուլ 27 հոկտ.  
Բաւալի Միտիկ-Օրլէան 8 1/8—1/4  
» Յայր Տօլէրա 5 1/8—  
Ծախուած 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ Սուլթանն առաջին կարգի  
Օսմանիէ պատուանշան տուաւ Օսման-  
պուրիի դահաժառանգ իշխանին, որ  
երեքշաբթի օրը Ն. Կ. Վեհափառու-  
թեան ներկայանալու պատիւ ունե-  
ցաւ:

Ն. Կ. Վեհափառութիւնն հրաման  
ըրաւ որ Վիտմ Ս. Սիւլթանի Բօհան-  
նէս էֆէնտիին Բոսփորի մէջ շրջա-  
դայրութեան համար՝ յատուկ շոգե-  
նաւ մը գրուի անոր տրամադրու-  
թեան ներքէ:

Օսմանեան և Պարսից սահմանա-  
դրութիւններուն ճշդիւ բաժանումն եր-  
կար ժամանակէ ի վեր վեհի ներքէ  
դաշնուելով, Վեհ Սուլթանն հրաման  
ըրաւ որ այս խնդիրը վերջնական  
կերպիւ լուծուի: Հետեւեալը յա-  
տուկ յանձնաժողով մը պիտի կաղ-  
մուի, որոյ մէջ Պարսից կառավարու-  
թեան ներկայացուցիչ պիտի ըլլայ  
Միրզա Մուհիպ Ալի փան, որ ար-  
դէն Գրքմի պատերազմէն ետեւ նոյն  
նպատակաւ կաղմուած յանձնաժողո-  
վոյ մ'անդամ եղած էր, բայց այն  
ժամանակ գործը չէր կրցած դոհա-  
ցուցիլ կերպիւ կարգադրել:

Միրզա Մուհիպ Ալի փան երկու-  
շաբթի օրը Ն. Պոլիս հասաւ:

Շքօտայէն եկած հեռագիր մը  
կը ծանուցանէ թէ քաղաքին կառա-  
վարիչը վաղա մը կանոնաւոր դօրք  
զրկել է Բօտիօրիցա, և թէ Գարա-  
տալի իշխանն ալ Բարձր Մեծ-Է-  
պարքոսին հրաւիրանաց համեմատ  
երեսփոխան մը զրկել է՝ հօն բաց-

ւած քննութեան ներկայ գտնուելու:

Ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանու-  
ցանէ թէ քննիչ յանձնաժողովը իը-  
ռովարարաց գլխաւորները բռնե-  
րանտարկել է, և ասոր վրայ Գարա-  
տաղլուց մէջ ծագած գրգռութիւնն  
հանդարտել է: Կայսերական կառա-  
վարութիւնը խտիւ պիտի պատժէ  
յանցաւորները, և խառնութեան զոհ  
եղողներուն լիակատար հատուցում  
պիտի ընէ:

Կայսերական կառավարութիւնը  
Դանուբի Օսմանեան առեւտրական  
գործակալութեանց ֆանչէիէր Տա-  
դէսեան կարապետ էֆէնտիին չոր-  
րորդ կարգի Մեծիտիէ պատուանշան  
չնորհեց:

Թուոս լրագիրը կը ծանուցանէ  
թէ Նիշի շրջակայներն ամխահանք  
մը գտնուել է, որոյ ամուսին Անդ-  
ղիոյ ընտրեալոյն ամուսին հետ կըր-  
նայ միջիլ:

Գուռիէ տ' Օրիանի մէջ կը կար-  
գանք թէ Արքունի նաւարանին ծա-  
ռայող Հայ բժիշկ մը Մահմէտական  
կրօնքն ընդունել է:

Կայսերական թղթատարութեանց  
պաշտօնարանին երկրորդ տեսուչ  
Մուրադ էֆէնտին, իր պաշտօնը չա-  
րաչար գործածելով հասարակութեան  
իրաւացի արտնջանաց պատճառ տը-  
նած ըլլալուն համար պաշտօնէն  
հանուեցաւ, և անոր տեղ Սըլազի  
հեռագրատան տեսուչ Ալեքսէ էֆէն-  
տին դրուեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ԵՍԶԱՄԱՐ ՈՒՄՈՒՄԻՆԵ

|                                      |              |
|--------------------------------------|--------------|
| 18 հոկտ ուրբաթ իրիկուն               | 50, 43       |
| 19 հոկտ. շաբաթ առաւօտ                | 50 7         |
| Կ. Պոլիս 18 հոկտ.                    |              |
| Սօրիէթ ժէնէրալի բաժնիք Անդր. Վ. 7 22 |              |
| « Գոյաճապութեան »                    | 5, 3         |
| Կ. Պոլսոյ Պանքային »                 | 6,           |
| Գրէտի ժէնէրալ »                      | 12           |
| Գրէտի Օսթրօ-Թիւրք »                  | —            |
| Կրկաթ ուղիւց հին ճր.                 | 430          |
| Փոխ. 1863 »                          | 345          |
| » 1865 »                             | 352          |
| » 1869 »                             | 274          |
| » 1872 »                             | 83 1/2       |
| » 1873 »                             | 262          |
| Թրամուէլ »                           | 0 մ. լի 4 75 |

ԲՆԱԿԱՐ ԳՐԱՄՈՑ  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐ

|                   |        |
|-------------------|--------|
| Յնդ. Կրօն գրքուց  | 409,30 |
| Կառու. առեւտր. »  | 87 14  |
| Իմ. և ուր. Կրօն » | 89 10  |
| Գրք. և ուր. »     | 51, 18 |
| Հինգ. Գրք. »      | —      |
| Հինգ. Գրք. »      | 104 25 |
| Պրիմ »            | 128    |

ՊԱՅՄԱՆՔ

Դաւրա գացած լրագրաց ճանու-  
ծալըը խմբագրութեան վրայ:  
Լրագրոյ վերաբերեալ նամա-  
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր  
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-  
լիս, Չինիլի փան, Մախի գրասեն-  
եակը:

Համարու ծախքը չվճարուած նա-  
ժակ չընդունուիր:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երեսփոխանական Ժողովն երէկ  
գումարեցաւ Ղալաթիոյ եկեղեցին  
ընդ. նախագահութեամբ Ամին. Ս.  
Պատրիարք Հօր:

Ատենապետ վսեմ. Տատեան Յա-  
րութիւն էֆէնտին ստիպողական  
պատճառաւ մը չկրնալով ներկայ գը-  
նուիլ, առժամանակեայ առեւտրապետ  
որոշուեցաւ Մեծ. Մեքէմէթ-Ս. Յա-  
րութիւն էֆէնտին, և ժամ 7 1/2ին  
ատենաւ բացուեցաւ:

Նախընթաց նստին ձեռագիր ա-  
տենագրութիւնը կարգադրուելէ ետեւ  
անոր մէջ Մեծ. Հ. Իմէիէիէն էֆէն-  
տիին նկատմամբ նշանակեալ սպառնա-  
կան ծանր խօսքի մը դէմ բողոք ե-  
ղաւ Իմէիէիէն էֆէնտիին կողմէ. բայց  
որովհետեւ այն խօսքին տէքը՝ Ատե-  
նապետ էֆէնտին՝ ներկայ չէր որ  
բացատրութիւն տար, առեւտրապետ-  
ութեան մէջէն հանել որոշուեցաւ, և  
այս բացառութեամբ առեւտրապետ-  
ութիւնը վաւերացաւ:

Օրակարգին միւս խնդրոց անցնե-  
լէ առաջ, Ս. Պատրիարքը խօսք առ-  
նելով՝ գահութեամբ ծանոց ժողո-  
վին թէ ֆոքր Ասիոյ սովատանջ աղ-  
գայնոց համար հանգանակութիւն  
հաւաքելու պաշտօն ունեցող յանձ-  
նաժողովը գովելի փութաշնու-  
թեամբ իւր պաշտօնը վարելով ար-  
դէն 1200 իւրա հաւաքած է՝ մեծ  
մասը իւր մէջէն, և ասոր համար  
լնդ. Ժողովոյ կողմէն յանուն աղ-  
գին չնորհակալութիւն առաջարկեց:  
Դիւանը յանուն լնդ. Ժողովոյ և  
աղգին չնորհակալութիւն յայտնեց  
յանձնաժողովոյ աղնուստիրտ անդա-  
մոյ:

Շնորհակալութեան երկրորդ քը-  
ւէ մ'ալ Մեծ. Ռուսինեան էֆէնտիին  
համար առաջարկեցաւ՝ խմբագրած  
նոր կանոնագրութեան համար, եւ  
ժողովն ալ հաճութեամբ ընդունելով,  
Ռուսինեան էֆէնտին բեմն եղաւ, և  
խմատալից ճառով մը փոխագործ շը-  
նորհակալութիւն մատուցանելով ժո-  
ղովին, յայտնեց թէ այս պաշտօնայն  
գլխաւոր մասը Ս. Պատրիարքին եւ  
Պալեան վսեմ. Յակոբ պէյին կը վե-  
րաբերի, որոց առաջինը այն է Ս.  
Պատրիարք Հայրն աղգային ժողովոյ  
կանոնաւորութեան տնհրաժեշտ հար-  
կը ձանչելով՝ ամեն բանէ նախագա-  
համարած և պատրաստութեան գոր-  
ծին իրեն յանձնած էր. երկրորդն  
ալ՝ վսեմ. Յակոբ պէյ Պալեան՝ մեծ  
աշխատութեամբ Կաղղիոյ աղգային  
ժողովոյ ներքին կանոնագրութեան  
սպառնալ օրինակներէն հատ մը գը-  
տած ու իրեն զրկած էր ֆարկըն:

Ռուսինեան էֆէնտին միանգու-  
մայն ժողովարանին մէջ առեւտրա-  
նից համար բեմ մը սահմանուած ըլ-  
լուէն առիթ առնելով՝ քանի մը լուրջ

խորհրդածուծութիւնները բրաւ երեւոյնաւորապէս բնական պարտականութիւններուն վրայ, և ազատամիտ ու իմաստուն տաճարաւորներ մաղթելով կենցեց խօսքը\*:

Այս ատենախօսութիւնէն ետեւ՝ ժողովը Մայր Գիւմարին երրորդ ատենադասարանի և ատենադասարանի ընտրութեան ձեռնարկելով Ռուսիոյն հասարակական Գ. Առնապետ և Արաճաճ հանձնարարած է Գիւմարին Գ. Առնապետ ընտրուեցան:

Իսկ նախաքննիչ դիւաններուն ընտրութիւնը կատարելու ժամանակ չմնալով որովհետեւ ժամը 10 դընտցած էր, զայլուրբաթ օր վերստին գումարուելու որոշմամբ ատենանք դրոշմեցաւ:

Ներկուան Ընդհ. ժողովը ներկայ գտնուող ունկնդիրք, ըստ նոր տնօրէնութեան տնտեսական ընդունւած էին առանց որ և է խորութեան, և դոհութեամբ տեսնուեցաւ, որ ժողովը եւս բարեկարգութիւնը ժողովին բարեկարգութեան համապատասխան վիճակի մէջ էր և աւելի:

Փափաքելի է որ ունկնդրութեան ընդունուող ժողովրդեան թիւը տեղւոյն ընդարձակութեան համեմատ ըլլայ, այսինքն որչափ որ տեղը կըրնայ պարունակել: Ըստ մեր հաշուին, ունկնդիր ժողովրդեան յատկապէս տեղը կըրնայ առնուազն 100 հոգի պարունակել առանց նեղութեան: Ասկէց զատ կառավարիկներ որ մտից տնտեսիները՝ փոխանակ օր առաջ Պատրիարքարանէն տրուելու, ժողովին գումարման օրը տրուին ժողովարանին դուռը:

Փորձը՝ Ստեփան Ստեփանով աղջայնոց համար հանդանակութիւն հաւաքելու մարդասիրական պաշտօնն ստանձնող աղջային յանձնաժողովը Մեծ. անդամներէն Մանուկեան Էֆէնտի 150 լրա, Նորատուրիկեան Յակոբ Էֆէնտի 100 լրա, Հալաճեան Բարսեղ Էֆէնտի 100 լրա, Կիւմարեան Յովհաննէս Էֆէնտի 100 լրա, Կիւմարեան Սիւրբէ Էֆէնտի 100 լրա և Խաւսեան Սիւրբէ Էֆէնտի 100 լրա ստորագրուած են:

Կըրեմք թէ վսեմ՝ Այվազովսի Յովհաննէս Էֆէնտի իւր հրաշարւեալով վրձնելով Ս. Աստուածամայ պատկեր մը նկարելու և Գումգափուի Մայր եկեղեցւոյն նուիրելու գումարութիւն յայտնել է:

### ՊԵՏՏՈՒՄԸ

ՏՆՈՐԻՆՈՒԹԻՒՆԻՔ ԿՐՈՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՅԳԱՅԻՆ ԿԵՐԻՐ՝ ՎԱՐՁՈՒԹԵՆ

1. Որոշուեցաւ յատուկ չըջարեւա-կանաւ հրաւիրել զթաղական խորհուրդի և զհոգաբարձութիւնի դպրոցաց մայրաքաղաքին, որ պանդուխտ լուսարարներն, ժամակուցներն ու անտեսներն՝ որ բազում տարիներէ հետէ իրենց ընտանիքը երեւի վրայ թողած մայրաքաղաքին մէջ կը թափառին, իրենց պաշտօններէն արձակեն և յորդորեն վերադառնալ ի հայրենիս, ի գիրկս ընտանեաց իւրեանց: Եւ այս որոշման դործադրութեան պաշտօնատէս հըսկելը՝ յանձնուեցաւ Պատրիարքական փոխանորդ-Հօր:

2. Նշանակուեցաւ որոշուեցաւ գրել առ Աւագերեցուն Մայրաքաղաքին՝ որչափ զի իւրաքանչիւր խոտորման հայր պարտաւոր ըլլայ սիրով խրատել և յորդորել իր պանդուխտ խոտորմանութեան որդիները որ հինգ տարիէ աւելի մնացած են ի պանդխտութեան, վերադառնալ ի հայրենիս:

\* Ատենախօսութեան պատճէնը յաւերթ թուով պիտի հրատարակենք:

Նիս իւրեանց, ի միութարութիւն այլադուրի ընտանեաց իւրեանց:

3. Ի լրագիրս և յեկեղեցիս պաշտօնական զեկուցմամբ՝ արգիլուեցաւ մայրաքաղաքին մէջ քահանայի՛ ձեռնադրութիւնը, մինչև յորոշուին և հանգամանաց ձեռնադրելուց, զոր ժողովը կը պարտաւորէ, և պիտի հրապարակէ քիչ առնէն:

4. Որոշուեցաւ գրել Կեդր. Ուսումնական խորհրդոյն՝ որ պարտաւորուեալ զաւանակները զրկուած կրօնի և բարոյականութեան դաստիարակչութեան իրենց նախ յատեան կրօնական ժողովը ներկայանալ ի քննութիւն:

5. Որոշուեցաւ գրել վանայ Գեր-Առաջնորդին նախ պատժել այն եկեղեցականը՝ որ վանայ Ամենայնադպրոցի Ամբիոն վրայ կրկնաճանութեան պատի գրեթէ, և ապա պարտաւորել զԱմբ. ժողովը իւր հոմանին, և առնուլ դարձեալ իւր օրինաւոր ամուսինը:

6. Երաժշտական յանձնախմբին գիտողութիւնքն ու հարցումներն ի մասին համարադին թէ Ծարականք ջայնադրութեան արուեստի համաձայն է՞ իրենց մէջ ապագութիւն, ուշադրութեան առնուելով՝ որոշուեցաւ գրել առ վեհ. Հայրապետին Ամենայն Հայոց, խնդրելով որ բարեհաճի ի նկատողութիւն առնուլ առաջարկեալ դիտողութիւնքը:

7. Երկարեկամներն ուղղեցան առ ամենայն առաջնորդս վիճակաց և վանահայր, և հրաւիրուեցան անհաճախանալու ամուսնութիւնը խրատել արգիլել և պատի չընել տալ արուելն՝ որ 20 կամ 25-է 40 տարեայ հասակը չէ լրացուցած, և աղկան՝ որ 16 կամ 25-է 15 տարին չէ լրացուցուած:

8. Եւս—Նուարդ վարժարանի խնամակարութեան կողմէ եղած առաջարկութիւնը թէ՛ վարժարանին ժառանգաւոր աշակերտաց ընտրութիւնը կրօնական ժողովն ստանձնէ՝ ընդունուեցաւ:

9. Պոլսոյ ժողովրդեան ոմանց Բահանայական նուէրի հատուցման մասին բրած զանցաւորութիւնն ի ներկատողութիւն առնուելով՝ որոշուեցաւ յորդորանայ կոնգրէի գրել առ ամենայն եկեղեցիս մայրաքաղաքին: 10. Մարտի 1-ին անուն բողոքական կին մը աղբարարելով յայտնած ըլլալով թէ կը փախալ իւր զաւակներովն հանդերձ մասնակ ի փախալ Սրբոյ Առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց, որոշուեցաւ զինքն իւր զաւակներովն ընդունել, և առ այս հարկաւոր եղած Ս. խորհուրդները մատակարարել:

11. Ընդունուեցաւ Գաղատացի Գաթի-Թանճի Պետրոսի աղբարարելով, որով ի հաւովմականութենէ հրաժարելը յայտնելով՝ ի փախալ Առաքելական Հայաստանեայց Սրբոյ եկեղեցւոյ մշտնէ կը փախալքեր հանդերձ ընտանեակի, և իրենց Սրբ. Գաթիգէնի գումարեցաւ Գաթիայի մը յատկացնել յիշեալ ընտանեաց:

12. Ժողովոյն անդամներէն Արթ. Տ. Գրիգոր Արամեան Գաթիայի յանձնուեցաւ հանդանակութիւն մը բանալ ի նպատակաւուցման Պահարանի և պատրաստութիւն եկեղեցական զգեստուց Պանտրմայի եկեղեցւոյն ի միութարութիւն հրկիզեալ ժողովրդեան տեղւոյն:

13. Միկրելի Երախայից անուանց ցուցակ մը պատրաստուելով՝ որոշուեցաւ ուղարկել և յատուկ շրջաբերականներով յաղարկել առ Բարձրիս և Աւագերեցուն մայրաքաղաքին և առ համարէն առաջնորդս և

Դեր—Առաջնորդս և Տեղապահս վիճակաց, պատուէր տալով որ Միկրելարանին քով կախուի այն Պաշտօնական ցուցակը, և անկէ դուրս ո՛ր և է անուն չընդունուի և չգրուի բնաւ երախայից վրայ ի ժամ՝ Միկրելութեան:

Մնացեալ հետեւեալ

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ ԱՌԱՋԱԿԱՆ

ԽՐԱՏՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԵՆ

(Շար. Տեա թիւ 1597)

Ուսուցէ՛ք և ծնողներն, և քարոզեցէ՛ք միշտ և համապալ, թէ կրթեցէ՛ք ու դաստիարակեցէ՛ք Ձեր զաւակները բարեպաշտութեամբ և ժամանակիս պահանջը համեմատ, բան մը չմնայէ՛ք բռնաւ դպրոցաց համար: Գիտցէ՛ք որ կատարեալ դաստիարակութիւնն ամեն բանէ աւելի սուղ և թանկագին է: Միաբանեցէ՛ք ամենէն առաջ նախակրթական դպրոցներն բարեկարգելու՝ ոչ թէ ի ցոյցը մարդկան թէ՛ այս ինչ ուսմանը ներքին կառուցուին Ձեր դպրոցաց մէջ, այլ փոխ տարէ՛ք զանոնք Ձեր մանկանց առ հասարակ դիւրաւ սովորեցնելու մասին: Դուք է՛ք թէ ու հիմնական՝ քան թէ՛ շատ և միայն անուանական: Ձեր կարողութեան չափով՝ զոր հետզհետէ բնորոշեալ եւս յատուցելու էք, ամենէն կարողազոյններուն մէջ վարժեցուցէ՛ք զանոնք՝ Ս. Աւետարանի վարժապետութեան, Հայ լեզուի ու պատմութեան, Տեղութեան լեզուի, թուագիտութեան, երկրաչափութեան, աշխարհագրութեան, դժգոյնութեան և ամբարակալութեան սկզբանց, բնադիտութեան, տարրաւածութեան, և այլն, և եթէ հնար է՝ աշխատեցէ՛ք ամեն դպրոցներուն մէջ մէկ քանի տեսակ ձեռագործ արհեստներ սովորեցնել մանկանց: Վասն զի անկարելի է, որ ամեն աշակերտը բանաստեղծ կամ գիտնական լինի: Իսկ եթէ աշակերտաց ձեռքերն դպրոցաց մէջ շատ կամ բնորոշ վարժեցան, կարող կը լինին ապա քիչ ժամանակի մէջ՝ արհեստ մը սովորելով՝ աղքատութենէ ազատ մնալ, մինչդեռ հիմայ անթիւ երիտասարդ կրտսէնուն, որ Հայերէն Գաղղիներէն ու Տաճկերէն կարողացեր են, բայց և այնպէս Հայագէտ, Գաղղիագէտ ու Տաճկագէտ չեն եղած, ստանաւորներն ու ճառեր կը չարագրեն, բայց բանաստեղծ ու պարծախս չեն, և իւրաքանչիւրն՝ բանաստեղծի, պարծախսի, լեզուագիտի և հեղինակի սիրտ կրելով՝ չեն զիջանիր խոնարհիլ և իրենց աչքին արհամարհ թըւած արհեստներու հետեւելով հայ ճարտիր:

Պէտք է որ զաստիարակել աշխատին որ իրենց յանձնուած աշակերտը ուղիղ բարոյականի, այսինքն կատարեալութեան ճամբուն մէջ կրթուին: Եւս առնեն բարի Գրիտոնեայներ ու հայրախոս Հայեր, հայեր ու մայրեր կուենանք, և Ազգը կը կենդանանայ:

Ազգային յառաջադիմութեան կարեւորագոյն մշակներն վարժապետներն են իրաւամբ, երբ կարող կը լինին իրենց աշակերտներն կարգապահ, հոգի և բարեւոյն նախանձախնդիր հանգիստեցնել զանոնք խնամակար և շատախոս լինել ըզգուցանելով, զի մի՛ գուցէ լինին վարժապետը նախ քան զաւանուն, յորմէ ետքն ուսնին անկարելի է նոցա համար: Գի միտի և ամենակարեւոր գիտութենէ՛ն զիմի է այնպիսին, այսինքն թէ իւր զգիտանալը չգիտէ, և կրնայ շատ փորձանք բերել մեր Ազգին: Գի դժբաղդաբար հեռուեցնել ալ կուենայ մեր մէջ:

Յարգեցէ՛ք վարժապետներն, զի նուաւ բարոյապէս ծնող են Ձեր զաւակաց: Գուց տղայ կը յանձնէք անոնք՝ Ձեր որդիքը, և նոքա մարդ կընեն զանոնք եւ Ձեզ կը վերադարձնեն: Ձեր երախտագիտութեան արժանի են մանուսանդ այն արժանաւոր վարժապետներն, որ իրենց պատուարութեան զաւակն զուրս չեն եղներ, զի արդէն շատ զուարթ և բազում քրտանց և ջանից կարօտ կը տեսնեն զայն, եւ ժամանակ չեն կարող դրուել յայլ և յաշեակ խաւարելով՝ ժողով կըսին ևս այլ յարուցանել Ազգայնաց մէջ:

Ձեր կրկին սեպէ՛ գումարաց մարքերն

ու սրտերն հրահանգեցէ՛ք, ո՛ր ծնողք բայց՝ զիտցէ՛ք, որ զպրոցի մէջ ուսանողն չափ ջանք կը սովորին նոքա աշխարհի մէջ ապրելու ճամբան: Ձեր խրատներէն աւելի Ձեր օրինակը շատ ազդու և հզոր է նուաւ աչքին: Ընտանեկան առաքելութեամբ յառաջադիմել և զարդանալ ջանացէ՛ք: Վախազարժ վտանգութիւն, անկեղծութիւն, համեստութիւն, սուրբ սէրն՝ Ձեր կեանքի ոգին և կենսոցութեան առանցքն թող լինին: Երբ այսպէս սովորե՛ք՝ ալ տեղի չեն ունենար այն ցաւալի դէպքերն և ընտանեկան ու ամուսնական քտմանքի կնճաղից վէճերն, որք զբժբարդարար այս օրերս շատցած լինելով՝ յոյժ կ'ըզաղեցնէ մեր Պատրիարքարանը և որ խիտ նոր է մեր Ազգին սէս համեստ և առաջնոց՝ ի վեր պարկեղտութեամբ հաշակեալ ազգի մը համար, և արտասուաց արժանի: Եւ ինչ կարելի է որ լինին, Աստուած իմ, այնպիսեաց միաւորութենէ՛ արդաստարեալ ծնունդը . . . քանզի Աստուծոյ՝ հոգւով և հմարտութեամբ երկրպագող Հայոց եկեղեցին, եկեղեցւոյ Ս. Խորհրդոց նորդին մէջ ընդունած է ամուսնութիւնը: Գի համարուած է, որ Գրիտոս Տէրն մեր սրբազնացոյց և սոցնուացոյց և բարձրացոյց այն Խորհուրդն՝ քանզի զիտեմք, որ ինչպէս Գրիտոս իկեղեցիին հետ սերտ սիրով կապուած ըլլալով՝ անբաժանելի է անկէ, այսպէս և այլն՝ իւր կնիքին ցմաշ անբաժանելի է և սիրով կապուած պիտի մընայ անոր հետ, ապա ուրեմն ո՛րչափ նախաճող զընդունութիւնը պիտի են նախ քան զամուսնանալ, և ո՛րչափ առաքելութիւնը ի կենսոցութեանն:

Արդ՝ իւրաքանչիւրս՝ եկեղեցական, աշխարհական, առաջնորդ, վարդապետ, քահանայ, ծնողք, դաստիարակ, վարժապետ, աշակերտ, աղբ, կին, երիտասարդ, կոյս, ծեր, և այլն, ջան ի՛ք դործ դնելու ենք՝ մեր առ Աստուած, առ եկեղեցին, առ ընկերն, առ որդիս սըրբազան պարտականութիւնները կատարելով՝ մեր կեանքին ոսկեղէն և մշնջեան կանոնն ընելով Գրիտոսի մեծ Առաքելոյ Պօղոսի սա՛ խրատալից խօսքերը:

Այլք առանց կեղծաւորութեան ատեալ զգար՝ զհեա երթալ բարեաց, յեղբայրութեան առ միմեանս զթոժք, ի պատիւ զմիմեամբք երանել ի փոյթ մի՛ վնհերտոք, հոգւով եւացէ՛ք, Տեառն ծառայեցէ՛ք, յուսով խնդացէ՛ք, նեղութեան համբերեցէ՛ք, աղօթից սուգ կուցէ՛ք, ի սէրս սրբոյ հաղորդեցարար, զիւրաքանութեան զհեա երթալք, որչանցէ՛ք զանիմելս Ձեր, օրհնեցէ՛ք և մի՛ անիմանէք, խնդալ ը՛դ խնդացողս, լալ ընդ լացողս, զինչ միմեանց խորհիլքէ՛ք: Մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիլք: մի՛ լինիլ իմաստունք յանձնաւ ծեր, մի՛ ումեք չարի չար հատուցանէք: Խորհեցարար՝ զբարիս առաջնութեան մարդկան, եթէ չհնար ինչ է՛ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալլէք: Մի՛ զանձանց վրէժախնդրէք, Մերկիք, այլ տո՛ք տեղի բարկութեան, զի դրեալ է: Եւ ի՞նչ վրէժախնդրութիւն, և ես հատուցեց, ասէ՛ք Տէր: Այլ եթէ քաղցեալ թիժամին ըո՛ հայ տո՛ւր նմա և եթէ ծարաւի՛ ծո՛ւր տո՛ւր նմա՝ զայս արարեալ՝ կայծակուն հրոյ կուտեսցես ի գլուխ նորա՝ Մի՛ յաղթի ի չարէն, այլ յաղթեա՛լ բարեան չարին, չարութ. ԺԲ. Գ—21:

« Երբորք Տեառն մերոյ Յիսուս Բերիտոսի և սէրն Աստուծոյ և Հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեւին, ամեն» Բ. Կորնթ. ԺԳ. 13:

1874 հոկտ. 15 Կ. Պօլիս

. . . Խորհուրդի

Խնդրեմ հետեւեալ երկուողք Ձեր պատուական թերթին մէջ զեանդել բարեհաճէ՛ք, յառաջագոյն ընդունելով մեր շնորհակալութեան հաւատարմքը: Գոհութեամբ սրտի կը լսեմ և կը տեսնեմ միանգամայն, որ Մեծ. Չիկէնեան Էֆէնտին իւր դործունէութեամբն և աղիւս ու խոհմ ընթացքովը կարողացած է Նուարդ

Շահագործման վարժարանի նախկին  
Տնօրէն Մեծ. Խիւնկեանէ Գեորգի  
արժանաւոր յաջորդը հանդիսանալը  
Ուրախ եմ մեծապէս և պարտ ան-  
ձին կը համարեմ հրապարակաւ իմ  
խորին շնորհակալութիւնս յայտնել  
նմա և յարատեւ յաջողութիւն մաղ-  
թելը քանզի թէ՛ այժմեան դպրոցին  
կարգադրութիւնքը՝ թէ՛ շատ մը նշա-  
նաւոր դաստիարակող դասարանութիւն-  
քը և թէ՛ համբէն աշակերտաց գո-  
հունակութիւնը, զիսկ յառաջագի-  
մութիւն կը հաւաստեն և յոյս մեծ  
կուտան ինձ որ անշուշտ հետզհետէ  
դպրոցը առաւել ևս պիտի բարձրի,  
զարգանայ յօգուտ և ի վնաս ոչ  
միայն տղայոց ծնողաց, ինչպէս և իմ  
այլ նաեւ հանուր ազգութեան:

Արդարեւ այս օրուան օրս քիչ  
պարծանք չէ Տաճկաստանի մէջ այն-  
պիսի ուսումնարան մ'ունենալ, որ  
դրեթէ ամեն տեսակ ուսմանը և  
գիտութիւն կաւանդէ արդի եւրո-  
պական ընտանոթութեան և ողորդ  
համայնքի: Աւերող է հոս այսպիսի  
դպրոցաց անհրաժեշտ պէտքը և  
օգուտը մի ըստ միովէ նկարագրել  
արդէն ժամանակը կը ցուցնէ և ի  
մասնաւոր մեր ազգին վիճակը կը  
յայտնէ որ առանց իրական և ճշմա-  
րիւ գիտութեան՝ չկայ ազգութեան  
կապ և ոչ օրինաւոր կեանք և այլն:

Արդ՝ վախճալիս առ այժմ՝ եթէ ոչ  
այլ ինչ, դէ՛թ այս դպրոցին մասնաւոր  
հոգ և խնամք տանի, որպէս զի պաշ-  
տօնեայք իրախոսութիւն, արդիւնքը  
շատնան և ուսման յարգը միանգամ  
զգալի լինի ժողովրդեան, ալ այնու-  
հետեւ շատ կը դիւրանայ ուրիշ մե-  
ծամեծ դպրոցներ ունենալ և անոնց-  
մով պարծիլ աշխարհի առջև:

Մնամ միշտ մտերիմ բարեկամ Ձեր  
Ն. Յակոբ Մարտիրոս

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՈՄԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ

1874—1875 թ.

ԱՌԱՋԻՆ ՆՈՒԵՐ ԸՍԵ ՏԻՆԱՆՅՑ

ՀԵՏՈՐ Ը.

Աւետարանիչ Տ. Սեբաստիան Ս. Երեմիայ

ԹԻՖԼԻՍ 1874

(Եր. Դ. Բ. 1597)

Վերադառնալով Տիֆլիս Ս. Երեմի-  
անցի Տոմարին՝ պէտք է ըսենք թէ  
Ազգային Տնտեսական և Դատաստա-  
նական խորհրդոց վերաբերեալ թը-  
ռանջանները տալէն ետքը, հայ  
կաթողիկոս և հայ Բողոքականաց հա-  
մառօտ վիճակագիրն ալ կը բովան-  
դակէ: Այնուհետեւ Հայաստանի ինն  
գաւառաց վիճակագիրը կը գտնեմք,  
և ապա Զմիւռնիոյ վիճակին մէջ բը-  
նակեալ Հայոց վրայ մանրամասն տե-  
ղեկութիւնք, զորս Զմիւռնիոյ Պ. Թ.  
ձերմակեան հաղորդած է:

Վերջապէս Տոմարին մէջ կը գտն-  
ենք ընդհանուր Հայոց բարոյց եւ  
սովորութեանց վերաբերեալ 130 հար-  
ցումներ, որ Պ. Աղէքսանդր Երեմի-  
անցի ժողոված 36000 մօտ հարցմանց  
մէկ մասն է: Այս հարցմանց մասին  
ճշակ մը տալու համար աւերող չը  
համարեցինք սա փոքրիկ կտորը հոս  
դնելու:

« Թ. 105. Բացի եկեղեցական կա-  
նոնադրութենէ ինչ շարժառիթներ  
կան ամուսնութեան հայ կամ այն  
աստիճանը չհաս համարելու: — 106.  
Զհո բառն ուրիշ բառով չէ՞ դարձ-  
ած վրում: — 107. ինչպէ՞ս են նայում  
չհասութեանը, երբ ազգականու-

Ն Ո Ւ Ս Դ

Ի շնորհաւորութիւն պանծալի անուան  
Ս. Պատրիարքի Տ. Տ.  
Ներսէսի Սրբազան Արքեպիսկոպոսի  
Բարեգործ շօր մերում:

Ոչ այնպէս կառք ժիր ի շու ասպատակէ  
փորձ կուտար,  
Քառածի երկվարքն հորդան տուեալ ձիւ  
ասպարէզ,  
Որպէս ժամը ամանակին փոյթ ի թաւալ  
անկեալ ի դիր  
Ուրեքն զամի ամի նաւակատեացն զլորձ  
հանդէս  
Սըխրալն յիշատակ՝ յոր սիրտ խոյսոյ  
յեւանդն ի ծափ,  
Եւ վսեմ նախի վառաց փայլ անաղօտ  
յաշ ծըրադրեալ,  
Զարթուցին այսօր ի մեղ խանդ իմն այլ  
նոր ուժ զին սիրոյ՝  
Զարժանին հիւսել սրտի պարկեշտ ի շուք  
վեհ ճակատուդ,  
Որ զմեծի անուանակցիւ բերեալ ի դէմ  
զգաւ տնայրոյ  
Զերեխտեացն հատուցանել մեղ յուշ ա-  
ծեա զարիտուդ,  
Զինչ քան զոր եկեղեցի յերդս ի քնար  
խաղ տալից,  
Պանծացոյց զհաւատմն, զՄեծն Ներսէս  
Շնորհալի,  
Զվայելուչն ողել ներքոյ՝ իր հաճոյ իմն  
ի նուէր,  
Եւ զարի արի դործոցն ըստուերադրել  
ըզ նշխար:  
Անցեան յաղթական՝ չնախանձեղդէմ  
զու ոտիսին,  
Որ ի քէն վրիժուց վառեալ, յանկեղ  
բանիցն չըթանց,  
Խարխալել զիշխանութեան հաստարան  
յաւակներ փոյթ:  
Այլ զերդ վեմ ալեաց ընդդէմ արձանաց-  
եալ ցառք աննրկուն,  
Կոծելոց յար ըզ դայրոյթ, անձանցն ի  
մնաս, փըշէր զիւր,  
Անդըստին ի խանձարոց ի կրթ չըրտ-  
հանդս ամբիժ կրօնի,

Թիւնը հօր կողմիցն է կամ երբ մօր  
կողմիցն է: — 108. ինչպէս է նայում  
ժողովուրդը հոգեւոր ազգականութեան  
վրայ. զոր օրինակ՝ խաչեղբայրու-  
թեան, կնքահայրութեան, հօգեւոր  
քրոյութեան վրայ և այլն. — 109.  
մինչև որ աստիճանն է շարունակ-  
վում հոգեւոր ազգականների չհա-  
սութիւնը. — 110. իմ որդիս կարող  
է պահուիլ իմ ծնողաց խաչեղբայ-  
րի աջկան հետ. — 111. ինչ է պոր-  
տը, պորտի նշանակութիւնը և հա-  
շիւը. — 112. ինչ է եօթը պորտի  
նշանակութիւնը և ինչ բանի վրայ  
է հիմնուած. և այլն և այլն: Սորն  
հարցմանց օգտաւետութիւնը չհեր-  
քելով, նայինք թէ քանի տեղերէ  
կ'ստացունան ստատականներ և ինչ  
եղբայրացութեանց պիտի բերեն զՊ.  
Ս. Երեմիանց:

Վերջապէս Տոմարին վրայ մեր  
տեսութիւնը, հարկ կը համարեմք  
ընդհանուր հայեացք մը ձգել այդ  
աշխատութեան վրայ: Այս տեսակ  
հեղինակութեանց և տպագրութեանց  
օգտուէտ ըլլալը խոստովանելով հան-  
դերձ, պիտի նկատեմք որ տիկին  
Ս. Երեմիանցի տոմարը, ինչպէս ինքն  
ալ կը խոստովանի, աղբիւս վրայ ամ-  
բողջ դադարաւ տալէ տակաւին հե-  
ռի է: Մենք այս աշխատութիւնն իբր  
մեր ազգայն վիճակագրի համար  
պատրաստի նիւթ մը կընդունինք:  
Ասիկա թուանշաններու ժողովածոյ  
մ'է, և այս տեսակ շատ ու շատ հա-  
տորներ հաղիւ ամբողջ դորձ մը կըը-  
նան ձեռացնել:

Տոմարին մէջ, մանաւանդ Ռու-  
սիոյ հայոց վերաբերութեամբ, շատ  
մ'եղբայրացութիւններ և անձնական  
կարծիքներ նկատեցինք, զորս հեղի-

Մարդեր դանձն ի բեր վատասիս յօդուտ  
Ազգին տանիլ սպաս,  
Սիրելի ժողովրդեան և օտարաց բերեալ  
նախանձ,  
Կուռ ի դրահ հաւատոյ պնդէր ընդ մէջ  
իւր դատի:  
Յիմաստից ասպարիզին շահատակեալ ի  
բիրտն անխոնջ:  
Գեր ի վեր ամբարձաւ ըզ վատս ազգին  
իւր և ըզ փայլ,  
Մըրցելով ընդ խոջ՝ ընդ խոթ սղաղե-  
նից մարար կրօնից:  
Ի հըռչակ համբաւոյ քարոզէր զիւրն ա-  
նձաւորիւ:  
Ի քանի քանի պայքարս զիմադրուեալ  
նա անվեհեր,  
Նըշաւակ զանհալտ ոտին եկեղեցւոյ  
կարկեաց յամթ,  
Եւ զգաւանս ամբարշտ ազգին չըջեալ  
իւր ի գլուխ,  
Խօրական խորհրդոց նոցին խաղաւ ցամաք-  
եաց ուղիս:  
Իբր հեղեղ խօսն հոսանաց յախտակեալ  
զընդ զլիմակ,  
Ողորդալ քերէ, զերկէ դանտաւս, ըզ  
թուփս և ըզ մայրիս,  
Կամ կայծակ սրտաւնդոստ՝ հրատին ի  
բոց համայնածախ,  
Լիզու, լալի զընդհանուրս ի սպառ ի  
սպառ աւերած:  
Այսպիսեօք պանծալի կենօք յաւարտ  
հասեալ դործոյն,  
Զարժանին ժառանգեաց զանունն ի դարդ  
ճակատուն:  
Քան դարձան կոփեալ ի կիճ, ճարտար  
մատոնցն ի ցոյց,  
Հայկազանց բնակից ի սիրտ անեղձ պա-  
հեմ զվշտակ,  
Որ յերկնից ամբողջ ըզ մահացուաց սիրտ  
և զաղիս  
Անքըթ ի թ աճուն ակամբ բննեալ չափես  
զխորս խնամոց,  
Ընկալ Տէր, զոր ի հաճոյ քեզ վերուդ-  
ղեմք ըզ մեր մաղթանս,  
Բուրվառա ըզ ձիցս ի ձօն, զերդ խօսնի  
անոյզ հեշտ ի բոյր.  
Տո՛ւր արի Հովնաթեոսիս կալ անասան  
յիրում դահուն,

Նախահին վիճակագրական օրինաց  
ենթարկել կուզէ: Սակայն կը մոռ-  
նայ տիկին Ս. Երեմիանց, որ այդ տե-  
սակ եղբայրացութիւնք շատ մը տա-  
րիններու և առատ թուանշաններու  
վրայ հիմնուելու կարօտութիւն ու-  
նին. իսկ անձնական կարծիքները՝  
որքան հետաքրքրական՝ այնքան  
և անտեղի են վիճակագրական մե-  
ծակշիւ դիտութեան մէջ:

Դարով Տոմարի լեզուին, Ռուսա-  
կան ոճերու հետ անդադար չլիթած  
կը տեսնենք Տաճկաստանի հայոց ո-  
ճերն ու բառերը. շատ անգամ կը  
նկատուին մի և նոյն բառերու տար-  
բեր հորիւնք կամ բայերու խոնար-  
մունք: Միթէ կը կարծէ՞ տիկին Ե-  
րեմիանց թէ լեզուի այդ խառնաշը-  
վոթութեամբ Ռուսիացի և Տաճկա-  
ստանցի հայոց լեզուները միացուցած  
է:

Տպագրական մանր սխալներ կան,  
որք սովորաբար տառասխալ կանուա-  
նին. այդ տեսակ անդուշտութիւնք  
շատ անգամ հեղինակութեանց  
յարգը կը կոտրեն: Առ հասարակ  
մեր հայ տպագրութեանց և ոչ մին  
տակաւին հասած ունի Միթիւրեանց  
ձեռքէն ելած տպագրութեանց ճըշ-  
դութեանն ու մաքրութեանը:

Ընտանեկան տոմարը թէ և մա-  
քուր թուղթի վրայ տպուած է և  
պատկեր մ'ալ ունի, սակայն Պօրոյ  
մէջ նշանակուած 25 դուրուշ դինը  
մեղ սուղ կը թուի, և կարծեմք թէ  
մեծ արդեւք պիտի ըլլայ այդ օգ-  
տուէտ դրքին ծաւալմանը: Թող  
դիմնայ պատուարժան հեղինակու-  
նին որ ներկայ հայ դրականութիւնն  
այս ասպարիզին վրայ աշխատողնե-  
րէն ոչ միայն բարոյական զոհողու-

Որ նովին վառեալ ի խանդ անուանակցին  
չաղացն ըզ հետ,  
Տաւաղէ ըզ հօտն ի փարախ խալինն ի  
զէտ հըսկէ անդուշ:  
Ժանտոմոստ ի ճիրանաց ոտիս զայլին  
զերծ մաղապուր:  
Տո՛ւր, մեղ, Տէ՛ր, ընդ երկար նդ - չըքով  
աճոյն Հայրապետիս  
Վայելել անխոնջ ի սէր ի շնորհ արթուն  
1874 հոկտ. 12  
Ստամբուլ Զերում բարձր Արքադ-  
թեան Սանատիքարձ ծառայ և որդի  
Տ. Արքեպիսկոպոս Գաբէէլ

Ի Լ Ա Ն

Իղլիս ֆապրիգայի հիւմանուտի  
Իլին Բօրէյս պաշտօնական մագա-  
տէմտ ի թատըր տէրէօհաէ խոռալ  
Իֆա խալէփէյի 6800 դըյէ պէտադ  
շարապ թօթ ուսու միւնադասայէ դօ  
նըլարագ, պէհէր գըյէսի 25 զըշա  
թալիպի էօհաէսիտէ օրուպ, Թըշլի-  
նի էվլէյը երմի իւշիւնձիւ չէհար-  
չէնպիհ կիւնիւ դարարը դաթիսի վե-  
րիլէճէյինտէն, ի թա ի թ մէյէ թա-  
լիպ օլտնէլին եւ վի մէյըլըտէ  
Տարի Շուրայի տաքէլիյէ կէլմէլըի  
16 Թըշլինի էվլէլ 1874

Պապը Սերասքէրի

Աստըրի Շահանէ զըշա վէ դա-  
րա օլտնէ վէ հաղթականէլըինէ  
վաղ օլտնէվադ սօպալէրին վաղը  
վէ լուղուրի դատար պօսու վէ սայի-  
րէսի ֆիւթթը մայիլէլըի վէճ իլէ  
թալիպի էօհաէսիտէ օրուպ, Թըշլի-  
նի էվլէյը Բումիննի երմի տէօրաիւն-  
ձիւ փէնձէնպիհ կիւնիւ դարարը դա-  
թիսի Իճրա օլտնէվաղընտան, ի թ ա  
լի թ մէյէ թալիպ օլտնէլըն եւ վի  
մէյըլըտէ Տարը Շուրայի տաքէլիյէ  
կէլմէլըի:

17 Թըշլինի էվլէլ 1874

Պապը Սերասքէրի

Թիւն կը պահանջէ. այլ և նիւթական  
Յուսայով որ մեր գիտողութիւն-  
ներն, իրեն անաշառ գըլէ ելած  
սիրով կընդունուին, վախճալի է  
տեսնել, որ տիկին Ս. Երեմիանց այ-  
սուհետեւ կրկնապատկէ իւր ջանքն  
ազգիս նորանոր աշխատութիւններ  
նուիրելու, և հայոց քնքուշ սեւեռ  
պարագլուխ կանգնելով, անոր օր  
առաջ քնէ սթափելուն և ուսմամբ  
ու գիտութեամբ իւր արժանաւայել  
ազատութեան և հաւասարութեան  
իրաւունքները ձեռք բերելուն օգնէ:  
Լսած եմք որ Տիֆլիսի Սրբուհի Ե-  
րեմիանց վաղուց ի վեր կը ցաւի մեր  
իդական սեւեռն Հարէմական տխուր  
դրութեան վրայ, և Հայ կանանց վա-  
յելուչ և պիտանի ընթերցանութիւն  
մը տալու գիտաւորութեամբ միտք  
ունի եղեր առաջիկայ 1875 թուական  
կանէն սկսեալ Թիֆլիսի մէջ ամառ-  
գիւր մը հրատարակել Ընդհանուր  
նով: Կը ըսեմք նաեւ թէ Կովկասեան  
հայաբնակ քաղաքներէն քանի մ'օ-  
րորդք և տիկնայք իրենց համակ-  
րութիւնը յայտնելէն զատ, օգնու-  
թիւն ալ խոստացած են հրատարա-  
կելը ամառգիրն, և արդէն աշխա-  
տելու ձեռնամուխ եղած են: Կա-  
տարեալ յաջողութիւն մաղթելով  
Տիֆլիսի Ս. Երեմիանցի, կը յուսամք  
որ իւր ջանքն ու աշխատութիւնը  
գեղեցիկ նախանձ մը կը յարուցանէ  
և Պօրոյ Հայ իդական սեւեռն մէջ, և  
անոնց մէջէն ալ արժանի աշխատա-  
կիցներ կ'ունենայ:

Նշանաւոր է այն խօսքը, թէ  
պիտանք իրենց դրութեամբ աղբի  
մը կը թուլան և յառաջըլնու-  
թեան վերմալին կրնան սեղմել:

ՊԱՆՈՒԹՅՈՒՆ

